

Վ. Ս. ԴԻՐՅԱՆ

ՆՈՐ ՎԱՎԵՐԱԳԻՐ ԻՍՐԱՅԷԼ ՕՐՈՒ ՄԱՍԻՆ

XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի հայ աղատադրական շարժումների պատմությամբ, մասնավորապես Իսրայել Օրու և Մինաս վարդապետի գործունեությամբ զբաղվող գիտական հասարակայնության ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ երկու արխիվային վավերագրերի վրա, որոնք հայտնաբերել ենք Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում: Վավերագիրը վերաբերում է 1724 թ. աշնանը, երբ Մոսկվա էին ժամանել Թահմազ շահի կողմից քաղաքական առաքելությամբ Արևմուտք ուղևորված կապուցին Իոհան Բատիստան և հայտնի հայ վաճառական Եղիա Մուշեղը: Դա այն ժամանակաշրջանն է, երբ Պարսկաստանի անցուղարձերը գտնվում էին ռուսական արտաքին քաղաքականության կիզակետում: Բնական է, որ այդ երկու գործիչների անցումը Ռուսաստանի վրայով դեպի Ֆրանսիա, չլր կարող իր վրա չհրավիրել ռուսական արքունիքի ուշադրությունը: Մոսկվայում գտնված ժամանակ Իոհան Բատիստային և Եղիա Մուշեղին ուղեկցողներին մեկը հայտնում է Արտաքին գործերի կոլեգիայի Մոսկվայի դրասենյակին, որ վերոհիշյալ անձինք հատուկ առաջադրանքով Պարսկաստանից ուղարկվել են Ֆրանսիա: Այդ կապակցությամբ Արտաքին գործերի կոլեգիայի Մոսկվայի դրասենյակում Մինաս վարդապետը ցուցումներ է տալիս, որ Իսրայել Օրու Պարսկաստանում գտնված ժամանակ ֆրանսիական Արևելյան ընկերության տեղի ներկայացուցիչ Եղիա Մուշեղը, որ դավանանքով կաթոլիկ էր, ընդդիմադիր քայլերի է դիմել Իսրայել Օրու նկատմամբ, ընդ որում այդ գործում նրան օժանդակել է Օրու հետպանակներից ֆրանսիացի Բուրգարը, որ անձնական մերձավոր կապերի մեջ էր եղել վերջինիս հետ: Հետագայում Բուրգարը մնացել է Պարսկաստանում, հավանաբար, որպես ֆրանսիական գործակալ, քանի որ 1716 թ. խանգարել է Մինաս վարդապետի առաքելությանը Պարսկաստանում:

Վերոհիշյալ տեղեկությունների հիման վրա, Իոհան Բատիստան և Եղիա Մուշեղը տարվում են Պետերբուրգ, որտեղ Շլիսելբուրգյան ամրոցում միառժամանակ արգելափակվելուց հետո՝ Իոհան Բատիստան վտարվում է նորից Պարսկաստան, իսկ Եղիա Մուշեղին առաջարկվում է մտնել ռուսական ծառայության մեջ: Վերջինս ընդունում է այդ առաջարկությունը և մտնում ռուսական ծառայության մեջ որպես թարգմանիչ:

Սակայն պատահական չպետք է համարել Եղիա Մուշեղի այդ քայլը: Նման հանկարծական որոշումը՝ քաղաքականապես հարմարվելը, «դիմափոխվելը» պատահականություն չէր: Եթե նկատի ունենանք, որ Եղիա Մուշեղին են պատկանում հետևյալ տողերը՝ «թեպետ վաղուց գիտէի, թէ Պետրոս թագաւորն պալոց է փրկել զագոն մեր, բայց առաջի անգամն որ գնացի Շամախի և հաստատապէս լսեցի թէ ամենեսին ռուստ թագաւորն գալոց է առնուլ յերկիրն պարսից վասն փրկելոյ զմեզ, առ ժամայն ուխտ եղի յանձին իմոյ ասել յամենայն աւուր հինգ հայր մեր և հինգ ողջոյն Մարիամ յիշատակաւ սրբազանից հնկից վիրացն Յիսուսի այսու դիտաւորութեամբ թէ Տէր Աստուած զմի ի տա-

սանց կենաց իմոց հատ յինէն և դիր ի վերայ կենաց Պետրոս թագաւորին, Տէր, տուր նմա առաւել կարողութիւն, զօրութիւն, որ յամենայն յաջողութեամբ գաւ և ազատէ զմեր ազգն»¹, ապա լիովին պարզ կղաւնա, որ նրա վերոհիշյալ որոշումը արդյունք էր հայրենիքը ազատագրված տեսնելու նրա անսասան ձրկտման: Այստեղից էլ կրկին անգամ անհրաժեշտութիւն է ծագում մասնավոր զգուշութեամբ վերաբերվելու Մինաս վարդապետի ցուցումներին, ուշադրութեան կենտրոնում պահելու նրա քաղաքական վարքագիծը: Հայտնի է, թե ինչպիսի հետևողականութեամբ էր նա հալածում Հովակիմ եպիսկոպոսին, որն իր մահկանացուն կնքեց բանտում: Ուստի պետք է որոշ վերապահութեամբ ընդունել նաև նրա հաղորդած տեղեկութիւնները նդիա Մուշեղի մասին:

Այսուհանդերձ, անկասկած է, որ Իսրայել Օրու գործունեութիւնը Պարսկաստանում հակադարձ դիմադրութեան է հանդիպել ֆրանսիական շրջանների կողմից: Օրու դեսպանութեան խայտաբղետ կազմը թերևս հնարավորութիւն է ընձեռել Պարսկաստանում գտնվող ֆրանսիական գործակալներին օգտագործելու դեսպանախմբի որոշ անդամների քաղաքական դիտավորութիւններն ընդգեմ դեսպանի:

Ստորև հրապարակվող վավերագիրը հետաքրքրական է Իսրայել Օրու քաղաքական գործունեութեան որոշ մոմենտները ավելի ընդարձակ լուսաբանելու համար:

№ 1.

Քաղվածք Արտաֆին գործերի կոլեգիայի Մոսկվայի գրասենյակի անդամ՝
Պյոտր Կուրբատովի գեկուցագրից:

1724 թ., նոյեմբերի 27-ին

В Государственную Коллегию иностранных дел из конторы оной коллегии оставшаго члена

Доношение

А о чем тому следуют пункты:

1.

По отпуске моего доношения 23-го сего получил я здесь е. и. в. указы из Государственной коллегии иностранных дел, один от 19-го дня чрез почту, о деле капуцина Баптиста, и об отправлении цареградских писем в Санкт-Петербург, другой с толмачем Казым Башениновым о присылке указов кабинетным куриэром Чеботаеву и Голянишеву Кутузову.

И на оные Государственной коллегии иностранных дел во ответ доношу.

¹ Ա. Զ. Հովհաննիսյան, Դավաճներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. 2, Երևան, 1959, էջ 602—603:

2.

По получении пакета с нужнейшими е. и. в. указы кабинетным курьером к Степану Чеботаеву и к Петру Голянищеву Кутузову, того ж времени, а именно 25 дня сего пополудни, отправлен оной пакет вслед тех курьеров тем же путем, которым они поехали, с толмачем Волошанином на двух почтовых лошадях, и не токмо ему на словах приказал, но и письменную инструкцию дал, чтоб он в пути поспешал, и тех курьеров мог в дороге настичь, и те посланные им указы отдать, если же он толмач в дороге их не изъедет то б ехал до Астрахани и тамо им оной пакет отдал.

3.

О деле Капуцина Бабтиста о присланном ко мне последнем от 19-го числа указе в кантору сенатского правления, вчера доношение я подал и притом копию сообщил, ибо в оном указе никакова секрету не писано, а показано что пред тем присланной секретной указ велено сообщить одному его сиятельству господину графу Матвееву, дабы тот усмотря фискалии отстали от намерения своего затруднения в том деле чинить. По тому моему доношению в канторе сенатского правления приказано послать указ в камору коллегию, но еще не послан.

4.

По указу ж е. и. в. от 17-го сего из коллегии присланному, армянин Минас вартапет спрашиван, и что сказал то записано моею рукою, и он вартапет подписал и присем с той записки копия посылается.

Петр Курбатов.

по записке № 312

Получено в Петербурге с почтой
декабря 3 дня 1724.

№ 2.

Արտաքին գործերի նուեհանի Մոսկվայի գրասենյակում Սրնաս վարդապետի հարցախնդրյան արձանագրության պատճենը:

1724 թ., նոյեմբերի 17-ին

По е. и. в. указу, из Санкт-Петербурга из Государственной коллегии иностранных дел присланному сего 1724 ноября от 17 дня, велено армянина Минаса вартапета спросить, что ежели он имеет еще что на армянина Мушеха о его противных и предосудительных интересам е. и. в. поступках показать и доносить, то б он вартапет объявил все подлинно со обстоятельствами.

И Минас вартапет по допросу сказал, что на армянина на Илию Мушеха имеет он вартапет показать и донести следующее. Когда Израиль Орий со известною комиссиею ездил из России в Персию и с ним был один из французов именем Бургар за офицера, от которого он Орий в секретах не скрывался и с тем присылал его Бургара оттуды и к Москве, а как Израиль Орий в Астрахани умер, а тот Бургар остался тамо в Персии. А когда уже потом он Минас вартапет ездил в Персию, и тогда помянутой француз. Бургар к нему вартапету многожды приходил и говорил, что он ведает зачем он варта-

пет в Персию приехал, и увещевал его вартапета того не делать, и в Россию не возвращаться и приносить к нему подарки, и обещал ему за то изхотайствовать в тех местах монастырь, в котором бы ему жить и начальствовать, и денег на содержание несколько тысяч рублей дать, и хотя он вартапет на увещаванье того Бургара не склонился и подарков у него не взял и ему Бургару сказывал, что он вартапет приехал туда ни за каким делом но только в тамошних местах помолится, и с сродники и с знаемыми своими видется, и может быть что либо он вартапет пакн в Россию и не возвратится; Однакож он Бургар такому его предложению не поверя донес на него в Шемахе хану имянем Хосрову, который родом был грузинец, и хотя тот хан казал себя к стороне императорского величества непротивен, однакож его вартапета потому его Бургара доношению держал в аресте недель с пять, а особливо в прибытие в тот город господина посланника Волинского гораздо крепко его держали, и до отъезду посланника Волинского за несколько времени из Шемахи оной хан его вартапета отпустил сказав ему, что шах их таких дел не уважает, и велел его вартапета выпроводить ночью оттого места верст здесять. И в том задержании учинилось ему вартапету убытков рублей с пятьсот. Ныне тот француз Бургар при шахе персиком, а жилище его в Тевризе, а Илья Мушеха ему Бургару в то время был товарищ и надобно разсуждение иметь, что не от него ль Бургара он Илья сюда или выное которое место, для каких противных дел послан. А более сего иного ничего он вартапет на того армянина Илью Мушеха оказать не знает: толмачим армянин Богдан Христофоров.

Подлинной допрос за подписанием Минаса вартапета.

В. А. Дилоян

НОВЫЙ ДОКУМЕНТ ОБ ИСРАЕЛЕ ОРИ

Р е з ю м е

Публикуемые нами архивные документы относятся к периоду пребывания видного деятеля армянского освободительного движения конца XVII — начала XVIII в. Исраеля Ори в Персии.

Новонайденные материалы дают возможность яснее представить действия французского двора и торговой буржуазии, в частности представителя французской Восточной компании Ильи Мушеха¹ и члена посольства француза Бургара, направленные против деятельности Исраеля Ори.

Предлагаемые вниманию специалистов документы представляют определенный интерес для дальнейшего исследования вопроса о столкновении политических интересов России и Западных держав в Персии, и, что важнее, дополняют наши сведения о деятельности Исраеля Ори.

АВПР, ф. СРП, д. № 10, л. 62—63 об.